

ՀՆՉՄԱԿ

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ ՀԱՅ ՀՍՄԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

«Ո՛վ կը լինի կաթողիկոս, ո՛ւմ կընտրեն հայերը. կը լինի՞ այդ մէկ այնպիսի անձնաւորութիւն, որ սուս կառավարութեան հրամաններէ հլու զործադրող յայտնը չէ, թէ ոչ. ի՞նչ զիրք կը բռնեն սուս ու տաճիկ կառավարութիւնները. ի՞նչ ազդեցութիւն կունենան նրանք ընտրութիւններէ վրայ և այլն» — ահա այն հարցերը, որ երկար ամիսներէ ի վեր տալիս են միմեանց հայերը: Մեր մամուլն էլ, հաւաքած իր եղած շեղած ոյժերը, շարունակ փող է փչում այդ խնդրի տախտակը: Ամեն մի գոյնի հրապարակագիրն իր վեղարարու կանդիդատն (թիկնածու) ունի, և ներքոջներ մի կողմից ու յարձակումներ միւս կողմից՝ ուղղված դէպի ընտրելիները — անվերջ են և կաթողիկոսական ընտրութեան ազիտացիան, քամու ջաղացքի թևերի նման, զարնվում է աջ ու ձախ իւրաքանչիւր կուսակցութիւն փայփայում է այն միտքը, թէ ընտրողական սպառնալովի գաշտում վճռական բողբոջն իրան է պատկանելու, վերջին խօսքն իրանն է: Իւրաքանչիւր կուսակցութիւն կարծում է, թէ մի ծանր բեռ կայ ընկած իր վրայ և ջանք է սնում իրան տալ սպառնալովեան զիտակ եղողի կերպարանք:

Իայց կաթողիկոսական խնդրի այդ բոլոր ժամանակաւոր ազիտատորները, եթէ ենթադրենք թէ զրանք զըրդ ված են անկեղծ մտքով ու զգացումով հէնց այդ պատճառով չեն թողնում արդեօք անզիտակցական գերասան նկի տպաւորութիւն այն կատակերգութեան, այն կոմէդիայի մէջ, ինչպիսին է այսօր կաթողիկոսական ընտրութիւնը: Անզիտակցական գերասաններ ենք ասում, որովհետեւ կարելի՞ է արդեօք կարծել, թէ այդ բոլոր ազմուկը, ազիտացիական այդ ճիգն ու քրտինքը որ և է լուրջ նշանակութիւն ունեն հայոց շահերի վերաբերութեամբ հայութեան ներկայ պատմական բողբոջում կոմէդիա ենք ասում, որովհետեւ մի՞թէ, յիշուի, հայ հասարակութիւնը կարծում է, թէ ինքն է ընտրում կաթողիկոսին: Ինչ

քաղցր ինքնախաբէութիւն է դա հայ հասարակութեան համար, որ այնքան մեծ կարեւորութիւն է տալիս ազգային կեանքի տեսակէտից կաթողիկոսական աթոռին և, հետևաբար, նաև ընտրութեան:

Իայց պէտք է ըմբռնել իրականութիւնը: Պէտք է գիտենալ, թէ քանի որ քաղաքական կերպերը Ռուսաստանում կը լինեն միապետական, քանի որ սուսահայերը զուրկ կը լինեն քաղաքական ազատութիւններից և քանի որ սուսաց բնապետական կառավարութեան շահերը կը թելադրեն նրան աւելի ու աւելի ճնշել սուսահայերին (որպէս նաև թէ՛ սուս և թէ՛ ուրիշ ազգերին Ռուսաստանում), — կաթողիկոս ընտրելը հայերի կողմից կայ ու կը մնայ լսի մի հեզնական ձեւականութիւն և այն ամբողջ աղմուկը, որ տեղի է ունենում զրա շուրջը, միայն ժամանակի կորուստ: Կրգված իր բռնակալ քաղաքականութեամբ, սուսաց կառավարութիւնը միշտ կը ջանայ իր ազդեցութիւնը զործադրել կաթողիկոսի ընտրութեան վրայ և իր քաղաքականութեան յարմար մէկ անձն բաղձած տեսնել կաթողիկոսական աթոռի վրայ: Մակարի ընտրութիւնն սպացոյց է դրան, որ զեռ ամեն քը յիշում են Ռուսաց կառավարութիւնը նոյնն է անում նաև այսօր, որ կաթողիկոսական գալիք ընտրութեան մասին մանրաքնին քննութիւն բացեց այնպիսի մի ժամանակ, երբ զեռ հայ հասարակութիւնը Մակարի թաղումով էր գբաղված: Փաստը, որ յայտնի է մեզ հաստատ աղբիւրից, հետևեալն է: Մակարի մահից անմիջապէս յետոյ սուսաց կառավարութեան կողմից կարգադրութիւն եղաւ ում՝ որ հարկն է՝ ճիշդ տեղեկութիւններ հաւաքել այն բոլոր հայ հոգևորականների մասին — իրանց կենսադրութեամբ, բնաւորութեան յատկութիւններով, ուղղութեամբ, համոզումներով և այլն, և այլն (մի շարք մանրամասն հարցեր), — որոնք կարող են կաթողիկոսական ընտրելիների կարգն անցնել: Եւ ո՛վ գիտէ, կաթողիկոսական գալիք ընտրութեան ժամանակ բուցէ ի՞նչ սիւրբարիզներ (անակնկալութիւններ) են սպառաստ վում հայերի համար սուսաց միապետի սալատում: Հայ հասարակութեան կամքից չէ կախված ընտրել կաթողիկոս այս կամ այն հոգևորականին, եթէ սուսաց

կառավարութեան շահերն էլ այդտեղ շօշափոււմ են: Փորձնականութեամբ յայտնի է մեզ, թէ ուսաց միապե տական կառավարութիւնն ինչպէս գիտէ գործադրել տալ իր կամքը, եթէ մենք զինված չենք նրա դէմ նպատակա յարմար գործիքներով:

Բայց ենթադրենք իսկ, թէ կաթողիկոս ընտրվեցաւ այնպիսի մէկ անձն, որ յարգված է Հայ Հասարակութեան մեծամասնութեան կողմից և կարող է համարվել այդ Հասարակութեան և ո՛չ ուսու կառավարութեան ընտրելի: Ենթադրենք, թէ այդ կաթողիկոսը տողորված է ամենաբար րի զգացումներով ու զիտումներով դէպի Հայ ազգը և իր գործունէութեամբ ջանք է անում օգտակար լինել նրան: Աչքի տուցն ունենալով այն, որ կաթողիկոսի իրաւունք ներք կենտրոնացած են միայն դպրոցի ու եկեղեցու վրայ, հարցնում ենք. — կարո՞ղ է արդեօք անել նա իսկապէս մի լուրջ գործ, երբ պարտաւոր է յարմարվել ուսաց կառավարութեան աննպաստ ու ճնշող օրէնքներին: Մի կողմ թողնենք արդէն այն, որ երբէք, ո՛չ մի երկրում հոգևորականութեան շնորհով գալորցական բարեկարգութիւն չէ եղել, որքան էլ այդ հոգևորականութիւնն ինքն կրթված լինէր, քանի որ նա դպրոցի նշանակութիւնը հասկացել է միայն կրօնական տեսակետից և իր շահերի համեմատ: Մի կողմ թողնենք նաև այն, որ ապագայ սեր րենդների ճշմարիտ կրթական նախանձախնդիր լինելով, պէտք է ձգտել խելը հոգևորականութեան ձեռքից, կաթո ղիկոսի իրաւասութիւնից դուրս հանել մեր դպրոցը: Բայց որովհետև մենք վերը զիջանցիկնք, թոյլ տալով մէկ այն պիսի ենթադրութիւն, թէ ապագայ կաթողիկոսը Հայոց ըն տրելիի կոչման արժանի լինի, զիջանենք նաև այս դէպքում, ենթադրելով, թէ Հայոց ապագայ կաթողիկոսը մէկ այն պիսի հմուտն է ու չը տեսնված անձնաւորութիւն կը հան ղիտանայ, որ կը կառավարէ մեր դպրոցները նպատակա յարմար եզանակով, որով անհրաժեշտաբար հոգևորակա նութեան ու կրօնական շահերի հակառակ գործած կը լինի: Ստեղծան, կրկնում ենք, ի՞նչ կարող է անել նա, երբ իր նպատակների գործադրութեան անջև պիտի հանդիպէ ուսաց կառավարութեան օրէնքների ամուր պատնէշին: Ատարակոյտ, չենք մոտացել, որ մեր դպրոցական գործերը ղերձ չեն ուսաց կառավարութեան խիստ ազդեցութիւ նից և թէ այդ ազդեցութիւնը նա ղիտէ գործադրել ո՛չ միայն ստանց ստանձին ուշադրութիւն գործնելու կաթո ղիկոսի վրայ, այլ և ղիտենալով սրան գործիք գործնել: Եթէ մոտացել ենք, այդ դէպքում ուսաց կառավարու թիւնն ինքն հոգս կը կրէ և մեզ կը յիշեցնէ, որ մենք նրա բանակայ լծի տակ ճնշված օտարի ենք և մեզմից չէ կախված մեր դպրոցական և ընդհանրապէս՝ Հասար ակական գործերի կարգադրութիւնները: Ահա՛ թէ ինչ

ենք կարգում եւրօպական լրագիրներում. —

«Կաթողիկոսական ընտրութիւնից վերջը ուսաց կա ռավարութիւնը կաթողիկոսին կը ներկայացնէ մի նոր կա նոնադրութիւն, որին պէտք է ենթարկվեն ուսաահայերը: Այդ կանոնադրութիւնն կունենայ երեք գլխաւոր կէտ. —

- 1) Ռուսաստանի Հայոց դպրոցներում՝ դասատուութիւնը պէտք է կատարվէ ուսաց լեզուով, բացի կրօնի: Հայոց լեզուն պէտք է դասատուվէ իրրև օտար լեզու: 2) Ռու սաց դպրոցները յաճախող Հայ աշակերտների կրօնական դասագրքերը պէտք է լինեն ուստերէն և կրօնքի դասա տութիւնը պէտք է գործադրվէ ուսաց լեզուով: 3) Էջմիածնի և Ռուսաստանում գտնված Հայ վանքերի ան շարժ կայքերին զին գնկուց յետոյ, ուսաց կառավարու թիւնը կիւրացնէ նրանց և ինքն կը կառավարէ: Այդ կառուածների հակախիտ արժեքը կը յանձնվէ կառավար շահան Բանկին և Հայ Հսգեորականների ոռճիկի նշանա կողն ու վճարողը կը լինի ուղղակի ինքն կառավարու թիւնը, կաթողիկոսն այլ ևս ոչինչ իրաւունք չունենա լով խանութելու գործերի մէջ:»

Ահա՛ ուսաց կառավարութեան ընթացքը: Խնդիրը նրանում չէ, թէ նա կը գործադրէ, թէ ոչ իր այդ ղի տումները և կաթողիկոսին կը ներկայացնէ, թէ ոչ այդ պիսի մի կանոնադրութիւն խնդիրը նրանումն է, որ այդ կէտերում արտօրայլում է ուսաց կառավարութեան բունպետական քաղաքականութիւնը, որից մղված՝ նա միշտ կարող է բանանալ իր հպատակ ժողովրդների լեզուի ազատութեան վրայ, լեզուի՛, որ ժողովրդի խօսակցութեան միակ գործիքն է, և տիրանալ այն կառուածներին, որ իսկապէս ո՛չ նրան պիտի սլատ կանեն և ո՛չ վանքերին, այլ ազգային են և պէտք է լինեն լոկ հասարակութեան հասարակական սեփականու թիւն: Այդպիսի քաղաքականութեան գէ՛մ մաքաւելու համար մի կաթողիկոս չունի և չէ կարող ունենալ հարկ եկած ոյժը, իրաւունքներն ու Հեղինակութիւնը: Այդպի սի խնդիրները վերաբերում են հասարակութեան, ժողք վերջին և սրանք են, որ կարող են, որ ընդունակ են մա քառել իրանց շահերի պաշտպանութեա՛ համար: Եթէ նոյն իսկ կառավարութեան ընդդիմադրող մի կաթողիկոս ունենանք, նա անկարող կը լինի չը յարմարվել ուսաց կառավարութեան պահանջներին ու օրէնքներին, որոնց դէ՛մ մարտնին իր բարոյական ու իրաւական ոյժերից վեր է և իր բուն պաշտօնից ու կոչումից էլ դուրս. կա թողիկոսը լոկ եկեղեցական պէտ է և ոչ հասա րակական: Եւ ուրեմն, մեր հասարակական շահերի վե բարեբութեամբ նրա գերը հաստատրվում է զրօի խակ կարծել, ինչպէս շատերը, թէ կաթողիկոսին կարելի է պատ նէջ գործնել ուսաց կառավարութեան օրէնքների դէ՛մ, երբ ղիտենք որ ղրանց հարուածներին պատասխանելու ոյժը չունի և չէ կարող ունենալ մի կաթողիկոս, — դա նշանակում է խաւափել սեփական հասարակական շա հերի պաշտպանութիւնից:

„Հապա՛ եկեղեցու բարեկարգութիւնների խնդիրը, — կասեն մեզ. — չէ՞ որ դա կաթողիկոսից է կախված. Հապա՛ հոգևորականութեան մտաւոր ու բարոյական զարգացման խնդիրը. չէ՞ որ մի կրթված կաթողիկոս կը ձգտէ լուծում տալ այդ խնդրին և ս. Ս. յո՛, դրանք են միակ կէտերը, որ լիովին կախում ունեն կաթողիկոսից, նրա անձնական համոզումներից, սակայն լոկ այդպիսի կէտերումն է, լոկ զուտ ներքին եկեղեցական գործերումն է կայանում կաթողիկոսի իսկական պաշտօնը, թէ՛ և ոուսաց կառավարութեան քաղաքականութիւնը ձգտում է այդ պաշտօնըն էլ հաւասարացնել զրօի: Բայց Բուսաստանի ու Թիւրքիայի ներկայ այնպիսի հասարակական հանգաւանքներում, երբ իրերի դրութիւնը սաւանում է երկու երկրումն էլ քար քարի վրայ չը թողնել և պահանջում է հասարակական բոլորովին տարբեր աշխատութիւն, արդեօք եկեղեցու բարեկարգութեան ու հոգևորականութեան կրթութեան խնդիրն է, որ պիտի զբաղեցնէ հայ հասարակութեան սղջամիտ և իր ազգային ու մարդկային պարտականութիւնները ճանաչող մասին: Արդեօք պէտք է մտանոնք մեր այդ պարտականութիւնները և լիովին յաջողակվինք ու ազգային գոյութեան ապահովութեան խնդիր դարձնենք կաթողիկոսական խնդիրը, որ եկեղեցու սահմաններից դուրս զուրկ է ամեն նշանակութիւնից և որ ոչինչ անջութիւն չունի մեր ազգային ու հասարակական արմատական խնդիրների հետ: Թողէ՛ք եկեղեցին եկեղեցուն, թողէ՛ք կաթողիկոս կոչված մուսուլման մնայ իր իսկական տեղը՝ եկեղեցու պատերի մէջ: Մի՛ դարձնէք նրան ազգային հուօք ձեզ համար, մի՛ երևակայէք, թէ նա ազգային խրատիլակ է ձեր ձեռքին ոուսաց կառավարութեան ղէմ և մի՛ թաղնվէք թըշնամու աչքից նրա վեղարի տակ: Եթէ՛ դուք պահանջող էք ձեր լեզուի, խղճի, դպրոցի ազատութեան, զիմեցէք այնպիսի հասարակական գործունէութեան, որի առարկան լինի ո՛չ թէ եկեղեցին, ո՛չ թէ կաթողիկոսի Ալմօն կամ Սարգիս լինելը, — ինչ ողջ մէկ է մեր հասարակական շահերի տեսակէտից, — այլ ձեր գործունէութեան առարկան թող լինի ընդհանուր հայութեան հասարակական կացութեան բարեկարգութիւնը, նրա մարդկային ու քաղաքացիական իրաւունքների ձեռք բերելը: Ունեցէ՛ք ուղղակի վէրքի վրայ ձեռք զնելու քաղաքացիական արիւթիւն: Հայութեան համար ներկայ պատմական բուզն լճուկն է, և այն բոլոր հայերը, որ մտքի ու սրտի մարդիկ են, չը պիտի վատնեն իրանց ոյժերն այնպիսի խնդիրների վրայ, որ գտան ու ծաղրական կերպով հեղնում են մարդկութեան մինչև օրս ձեռք բերած առաջագիտութիւնն ու նրա յետագայ զարգացման պահանջները: Հայութեան հանրական շահերը հասարա-

կական բոլորովին այլ աշխատութեան, այլ գործունէութեան վրայ են ձեռ մատնանիլ անուս: Ա՛րքող քաղաքա կրթված աշխարհի վրայով սկսել է արդէն փչել այն հոգի, որ գիտէ կործանել հասարակական խարխուլ չէքերը և մտքեւ, հարթել ասպարէզը նոր չէքերի համար: Թողէ՛ք ընկնեն խարխուլ չէքերը և ձգտեցէ՛ք կառուցանել նորերը: Հասկանա՛նք մեր պատմական պարտականութիւնը. ըմբռնենք այն մեծ դերը, որ զնում են մեզ վրայ ժամանակիս հանրամարդկային կենսական պահանջ ները և գործադրենք նպատակայարմար աշխատութիւնը: Թողնէ՛ք մի կողմ այնպիսի խնդիրներ, որ հեռացնում են մեր ուշադրութիւնը մեր արմատական ցաւերից, որ ոչինչ գրական նշանակութիւն չեն կարող ունենալ հայութեան հասարակական շահերի վերաբերութեամբ և որ րոնց շուրջը հանած ազմուկն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ ինքնախարէութեան և կամ եկեղեցու բակում մղված կուսակցական կռիւների արդիւնք:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

ՆՍՄԱԿՆԵՐ ԹԻԻՐՔԻԱՅԻՅ

Արարկիր, 28 յունվար 1892.

Ինչպէս յայտնի է ընթերցողաց, անցեալ տարի զարնը, ւեցաւ քաղաքիս մէջ Ե ու ս ու Ք ոստիկանապետը: Ապանութիւնը տեղի ունեցաւ գիշերը գրեթէ ժամը վեցի կամ եօթի ատենները քաղաքի կեդրոնական փողոցի վրայ՝ Մ ա լ ու մ ե ա ն Զ ա ք ար ի տան առջև: Հետեւալ օրը խուզարկութիւնք տեղի ունեցան, բանտը լիցուեցաւ հայ ու տաճիկ բանտարկեալներով: Նախ նական հարցաքննութիւնը ոչինչ չը տալուի բոլոր բանտարկեալք կարձակուին երաշխաւորներ տալով իբաց առեալ յիշեալ վատահամբաւ Մարումեանի եղբայրն իր մի ազգականի հետ, որք այն գիշեր պառկած են եղեր Զաքարի տունը: Երբ օրէն կուգայ Քարբերդի քովսէր Ս ու լ է յ մ ա ն ը, որ այսօր ի Պոլիս բանտարկուած է՝ իր պաշտօնի մէջ զանազան զեղծումներ գործելուն և կառավարութեան հարիւր յիտուն ոսկին վատնելուն համար (գոնէ այսպէս կիմացնեն պաշտօնական թերթերը), Ահա այս գող ու խարդախ քովսէրը, որ Քարբերդի աղիւ եղած (պաշտօնանկ) կուսակալի աջ բաղուկն էր, կըսկսի վերաքննութեան: Երկար զէս ու զէն ընկնելէ յետոյ ողորմելին կը տեսնէ որ սպանութեան հետքերը միանգամայն անհետացած են (բառ տա բառ այս խօսքերը կը յայտնէ նա սուսնորդարանի մէջ մի քանի քաղաքացիներու հանդէպ), Ասկայն և այնպէս բանտը կը լիցուի, այս անգամ միայն հայերով: կուսակալը այսպէս հրամայած է եղեր: Զաքար Մարումեանը կը խոտոտնայ քննիչ պաշտօնեա

յին օգնութեան ձեռք կարկառել, պայմանաւ որ իրեն ռատիկան լրտեսի պաշտօն արուի Ձը նայելով որ գայ մազամը այս անձը այս կամ այն խնդրի համար բազում անգամ վնասած է եղեր կառավարութենէն, պատուիրելով որ այլ ևս կառավարութիւնը ոտք չը կոխէ, սա- կայն և այնպէս խարդախը կը խոտտանայ պայմանը ընդունելը:

Չաքար տեսակցութիւն կը խնդրէ բանտարկեալ եղ- բորը հետ: Բանտարկեալները կը բողոքեն, երևան հանն լով որ դեռ նոր արգիլուեցաւ իրենց հետ տեսնուիլն: Անուշա այս բողոքը չը լսուիր: Ն ազիկը կը հաննն դուրս եղբորմէն հրահանգներ ստանալու համար: Այս կը կանչուի գող քննիչի քով ուր նա՝ ջրելով իր առաջի ըսածները կը վկայէ թէ՛ « ևս լսեցի հրացանի պայթիւ- նը, պատուհանէն գլուխս դուրս հանեցի և վեց մարդ տեսայ, որոցմէ միայն երեքը ճանչցայ. — Հացագործ և ան Գ. անիէլ, Մըսըրլեան Գ. րիգոր և Ներկա- րարեան Վարդան (երեքն ալ նոյն Չաքարի սխերիմ թշնամիները): Բանտարկեալները լսած լինելով երկու եղբարց խօսակցութիւնը, կը բողոքեն քովսէրին: Անհ տեսնելով կը կանչուի Ն ազիկը զբարտիչի ազգականը և կը վկայէ որ ընդհակառակը « երբ լսուեցաւ հրացանի ձայնը, վախէ երկուքս ալ գլուխս վերմակի մէջ փաթ թելով մինչև լոյս ծագելը կը գողայինք »: Բանտարկուած քովսէրին հաճելի չը գար այս վկայութիւնը, ուստի և կը վնասէ վերջինս « աղայ ես » ըսելով իսկ՝ « աղան, հա գիւ մի քանի ամսուան պղտիկ է Ն ազիկէն: Հետաքրքրա կան է իմանալ թէ ի՞նչ կըսէր քովսէրը եթէ ուրիշ վը, կայութիւն լինէր: Ի՞նչ ուրիշ բանտարկեալ Ս եդրակ Ն- կաւեան (որ ուզեղային հիւանդութեան պատճառաւ վերջերս ինքնասպանութիւն գործեց) քննութեան ժամա նակ կը վկայէ թէ լսած էր Երեսուֆի ձայնը որ « աղամ, պէյիմ » պոռալով թողութիւն կաղաղակէր: Քննիչը կը միացնէ այս երկու բացականչութիւնները՝ կըլլայ Աղա. սէյ, — ածական մը որ կուտան քաղաքիս մէջ մանչերուն (ըսա սովորութեան քաղաքի՝ Ներկարարեանը այս օճա կանով կը կոչուէր ընկերներով): Նիւաեան կը բողոքէ այս միացման գէմ: « ցնորամիա ես » ըսելով բողոքն ալ չարձանագրուի:

Ն ազիկի զբարտարութենէն յետոյ վերոյիշեալ երեքի բը նակարաններ կը խուզարկուին: Գ. անիէլ Հացագործեա- նը չը կայ, տան մէջ ոչինչ չը գտնուիր: Մըսըրլեանի վեր մակի վրայ լուցիկի գլխի մեծութեան չափ մի անորոշ բիծ կը տեսնուի, իսկ պատի (փողոցի կողմէն) վրայ ար եան հետքեր՝ մատով քսած: Բարեբաղդարար տանը քո վի ձամբի հօճան կը վկայէ թէ տաներէն մէկուն բիթն էր արիւնսած, թէ նա էր քսած այդ արիւնը: Գայմագա մըն ալ կը վկայէ որ առաջի խուզարկութեան ժամանակ այդ հետքերը չը կային: Ներկարարեանի հին ճերմակ գէնի վրայ մի հին բիծ կը գտնուի (չը մոռնամ ըսելու որ ինքը ներկարար է):

Ահա գտնուեցան Երեսուֆի արեան հետքերը: Ներկա րարեանը և Մըսըրլեանը կը բանտարկուին և զինուորա

կան ահագին ոյժով Քարբերդ կը տարուին: Ամբողջ քա ղաքը ոտքի կենէ Երեսուֆի սպաննողները տեսնելու: « Երեի հարուստի տղայք են » կը կոչէ բազմութենէն տաճիկ մը, « փարայի աղբիւր է » ... և այլն:

Վիրջը ասոնց վրայ կը բարդուի երրորդը, Յ ովհան ն է ս անունով: Սպաննութենէն երեք շաբաթ յետոյ ասոր ձեռքի վրայ արեան հետքեր կը տեսնուին: « Երեսուֆի արիւնն է ըսելով՝ աս ալ Քարբերդ կը զրկեն: Ոգորմելի երիտասարդը ասոր համար մէկ տարի բանտարկութիւն կը տուժէ առանց մի անգամ հարցաքննուելու (չեմ յի- շեր միւս պարագայները, զորօրինակ պախիչը):

Ներկարարեանը և Մըսըրլեանը տաանեակ վկաներ ցոյց կուտան որ այդ գիշեր այս ինչ այն ինչ տեղն էին Վկաները չին լսուիր: Ն ազիկ տուն վերադառնալով իր մօր պագաղի վրայ կսկսի մագերը փետտել « ա՛խ Չաքա րը տունս քանզեց, անմղներ ձեռք տուի » պոռալով ուշաթափ կիյնայ: Ներկայ գտնուողները կը վկայեն զայս: Անուշի Բանտարկելոց ծնողները, երբ կը հանեն վեր մակը և ճերմակեղենները, կը պահանջեն որ մութարի կնիքով կնքուի լսող չըլլար (որովհետեւ այս ամենը քով սէրի հաշուին չը գար — Պօլսէն հեռագիր է եկած յանցաւ տրն գտնելու): Ոստիկանները շարժած, իցոյց ամբողջ աշխարհի՝ կառավարութիւն կը տանին այս իրերը: Ի՞նչ այն հետեւալ օր կը կանչուի բժիշկը քննելու և այն ալ զօմիսէրի պատուէրին համապատասխան, և այն և այլն:

Երեք ամիս առաջ ալ, երբ բանտարկեալները դատա բան պիտի հանուէին մի տարի բանտարկութենէ յետոյ, դատաւորները մի հարուստ քարերդցի տաճիկի միջոցաւ (Բաշխա էֆէնտի) իմաց կուտան բանտարկեալներուն որ եթէ ութսուն սակի տան, կազատուին: Մերժողա- կան պատասխան կը տրուի: Գատաւորները իրենց վրէ ժը լուծելու համար ՄՍՀՈՒԱՆ ԿԸ ԴՍԱՏՊԱՐՏԵՆ ՀԱ- ՑԱԳՈՐԾԵԱՆ ԴԱՆԻԷԼԸ, ՆԵՐԿԱՐԱՐԵԱՆ ՎԱՐԳՍ- ՆԸ ԵՒ ՄԸՍԸՐԼԵԱՆ ԳՐԻԳՈՐԸ:

Օրինակելի՛ արգարադատութիւն... Ամբողջ նահան գը... ո՛չ, զարմացած չէ, այլ կը խնդայ ասոր վրայ:

Բանտերը լի են. քաղաքէս, Ահնէն, Բինիսանէն, Տիվ- րիկէ, Քարբերդէն հարիւր հարիւր յետոն բանտարկեալ ունինք, անօթի, ծարաւ, մերկ բանտերն ու բակերը թափ ուած:

Գտներս երեք բանտարկեալ ալ Պօլիս ուղարկուեցան: Հետաքրքրական է իմանալ ասոնց Պօլիս տարուելու պատճառը: Չորս հինգ ամիս առաջ քաղաքիս դուրսը կը վի բաւորուի (ձեռքէն) և կը կողոպտուի մի թուրք: Ի՞նչ տահամար գող դեռ նոր բանտէն ելած և ոտիկանի պաշտօն ստացած՝ Փիլիկ Բացգլուսխան՝ կը մատ նէ իր երեք թշնամիները: Երբ տեղական կառավարութիւնը կուգէ դանոնք արձակել, մէկ ալ նայիս հետադիր կուգայ Պօլիս ուղարկելը: Պատճառը՝ Պատճառը այն է որ կողոպտուածը մի ինչ որ ծանօթ պալատական պաշ տանեայ կուեննայ, ահա ասոր խաթերին չը գպնելու համար:

Գտաւորապէս մի տարի առաջ վիճակիս համազու

մար ժողովը դիմած էր պատրիարքարան տանն և ութ յոդումս էր բողոքացնել մի բողոքագրով, ուր մասնացոյց եղած էին պաշտօնէից ասորինութիւնները: Յիշեալ բողոքագիրը կը վերջանար հետեւեալ խօսքերով. « կամ մի միջոց ցոյց ապր որով կարող լինինք ասորինութեանց առաջին անուր և կամ մի տեղ, ուր կարող լինինք ամբողջ քաղաքով գաղթել »:

Կոնգրակներու համբաւաւոր խմբագիրը չներսի թէ « անխելահաս, ստահակ » համարելով յիշեալ բողոքը, չը պատասխանեց:

Վերջերս հայ ու տաճիկ աղնուականները (հարուստները) համազումար ժողով կազմեցին խորհելու համար թէ ի՞նչ միջոցներով կարելի է յուզման առաջն առնել: Գայմագամը, մի ճիզլիտ արաբ՝ իր ցեղի վասակը, ցրրուեց ժողովը առանց թաղելու որ եղբակացութեան յանգին:

Տեսնելով այն տագնապը որ կը տիրէ քաղաքիս վրայ, չորս ամիս առաջ մի բողոքագիր ուղարկուեցաւ պալատ: Պատասխան չառնելով՝ ամիս ու կէս առաջ ալ սոյնանը ման բողոքագրեր ուղարկուեցան զեսպանաց, պատրիարքարան ու պալատ երկու հաղարէն աւելի ստորագրութեամբ (պատճէկը յատաճիկայ սուրհանդակով կուղարկեմ վաւերացեալ բոլոր թաղային խորհուրդներէ:)

— Սա վերջին դիմումն է, — կըսէ ժողովուրդը: Կառավարական հայ պաշտօնեաները իրենց հրամարս կամներն են տուած:

Առհասարակ մտքերը վերջին ծայր յուղեալ են. ո՛չ որ զիտէ թէ վաղը ինչ կրնայ պատահիլ Քաղաքիս և իր շրջակայից կը սպասէ մի մեծ արհմահեղութիւն: Հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, աղայ թէ աղջիկ, — բոլորն ալ մի տենդային գրութեան մէջ կը դանտին: Հարակոյս չը կայ որ կառավարութիւնը մօտ օրերս պիտի յեղատիտէ քաղաքը իր հեռաւոր շրջակայներով հինգ վեց նահանգներ, որոց հետ միայն յարաբերութիւն ունինք: Սմեռուիք կը տիրէ նոյն զանգաւը, նոյն դժգոհութիւնը, նոյն յուզումն ու զրգուածը: Ապահովութիւնը բանտի մէջն է մնացած . . .

Երբէք տեսնուած չէ մտքերու այս տեսակ յուզում: Արարկիր նման է մտող հրարուխի. ամեն վարկեան անհամբեր կսպասենք մեծ կատորածին:

Կոր սերնդէն մէկը .

Յ. Գ. Խնդրեմք հուշակել որպէս լրտես հետեւեալ անձ նաւորութիւնները Չաքար Մալու մեան, Գըրիգոր Խէրպէեան (ֆրանսերէնի ուսուցիչ, Սերաստիոյ ճեղքի գինորու գարոցէն վկայեալ), Մարտիրոս Եաղըճեան, փաստարան, որ այժմ Պօլիս կը գտնուի, Փիլիկ Բացգլուսեան, ատաղձագործ, Կարապետ Ֆերմանեան և Սեւտիս Կէօղիւ. Պէօյիւքեան (սա մէկ աչքով կայր է):

*) Տես սոյն համարի նամակը Կ. Պօլսից: Մ. Խ.

Սերաստիա, 18. 30 յունար 1892.

Գաւառիս հարաւ արեւմուտք գտնուող Փափախուլը կոչուած պարսկական բարբարիկ զայթականութիւնէն հարիւր յիսուն երկու հարիւր հոգոյ մօտ զըր. սէր. աարի խումբ մը կազմած են, ընդ հրամանատարութեամբ այդ ցեղի Միհր. Ս. Լիլի, որը կը պատրաստուին ասպատակախումբի վրայ գալու, թէև հոս այնպէս լուր հանած են թէ Երզնկայ պիտի երթան, հոն Համիտիէի նորակազմ գունդին միանալու. բայց հաւաստի աղբիւրէ հասկցուած է թէ պատրուակ մ' է գաւ Սյաւեղի կառաւարութիւնը բացի այդ խումբի ունեցած ազգամթերքէն, իր կողմէ ալ պէտք եղածը տուած է:

Պօլսէն տեղոյս կուսակալին կը գրեն թէ ի՞նչպէս կըլլայ որ ամեն անգամ « Հնչակի » մէջ յօդուածներ կան Սերաստիայէն, մինչդեռ գաւք կըսէք թէ լաւ կը հսկենք »: Սյս յանգիմանութեան համար Սերաստիոյ կուսակալը հիւպատոսաց և ճիզուիթաց նամակներուն վրայ կասկածեցաւ՝ թէ հայերը իրենց թղթակցութիւնը անոնց միջոցաւ կը զրկեն: Սյդ պատճառաւ բոլոր եւրոպական թէ՛ եկած և թէ՛ գուցած նամակները կը քննեն:

Անցեալ շաբթու ի Պօլիս թուրք և հայ թերթերու ման բալրոց մէջ կարգացուեցաւ թէ « Սերաստիոյ երկրագործական գրամատան տնօրէն Ահմէտ Նէճաթ Էֆէնտի ի Սինապրեղարգելութեան գատապարտուած է զործած զեղծումներուն համար »: Կրբև պաշտօնեայ երբ կանուանարկուի և կը գատապարտուի զեղծումներ գործած ըլլալու անունով թերևս այսու թուրք կառավարութիւնը կարծել տայ և կլլեցնէ օտարներու թէ հետա մուտ է իր երկիրը ու կառավարական պաշտօնէից անուղղայ ընթացքը չտկելու: Սակայն ահա մենք պարզենք հոս որ այդ զեղծումներ ըսուածն մի քանի ազատամտական խօսքեր են և ուրիշ ոչինչ: Թուրք մէճլիսի մը կեր ու խումբի ատեն երբ գինուց և ողելից ըմպելիաց վրայ խօսք կը բացուի, Նէճաթ Էֆէնտի գինուց օգտակարութիւնը և բողոքութիւնը զիտականապէս բացատրելէ վերջ՝ կը յաւելու նաև, որ եթէ Մուհամմէտ արգիլեց զայդս մահմետականաց՝ միայն Արարիոյ համար էր, և թէ պէտք է որ մենք (մահմետականք) ալ մեր կարգ մը նախապաշարումներէն զուրս ելլելու և գարուս ուղոյն ու պահանջներուն յարմարելու ենք, ինչպէս որ Մուհամմէտ ալ իր ժամանակի նախապաշարմանց գէմ բողոքով՝ էր և այն և այն: Սորա այս խօսքեր իր ընկերակից պաշտօնեայք կը մեկնեն՝ որպէս թէ Մուհամմէտ բողոքական (փոսթէտան) եղած ըլլայ, և թէ ինք՝ Նէճաթ էֆէնտի բողոքական քրիստոնեայ մ' ըլլայ: Բայց Նէճաթ էֆէնտի այդ խօսքեր միայն առիթ մը եղած են քաղաքիս շատ մը պաշտօնէից, իմիջի այլոց ոստիկանապետի և կուսակալի — զայն չարաչար տապալելու, զի այս անձ արգարև լուսամիտ և արգարասէր մէկն լինելով, չէր վարաներ ամեն պարագայից մէջ թուրք պաշտօնէից գործած զեղծումներն իրենց ճակտին զարնել, մանաւանդ երբ

յականէ անուանէ կը պատարակէ ոստիկանապետ Խիւսրեւ փաշայի և կուսակալ Մէմուսէ պէյի երկուքի միջև կաշառակերութեան ընկերակցութիւն և գաւազն կազմելը: Մենք այսու նմուշ մը տալ կուզենք թէ արգելօք թուրք ժողովուրդն գէթ այսօր փորքամասնութիւն մը չը զգար ու կոյր է տեսնել այն սկիւնքն. բնաբարութիւնները, որք ի գործ կը գնեն նոյն իսկ հարազատ ժողովրդեան վրայ ալ, որոյ մէջէ կը լսուին խուլ բողոքոյ ձայներ, զգրւանք, տրտունջներ, և այդ ճամբու մէջ դռնէք ալ պահաւան իւր սով կրնայ չը հաւատալ որ մի օր ալ յեղափոխական գաղափարք ընդարձակ ծաւալականութիւն չը գործեն այդ ժողովրդեան մէջ ու չը խորտակէ իր հարազատ երկաթի ծանր լուծն:

Կոչնակ Աերատուոյ .

Կ . Պոլիս, 8 մարտ 1892 .

Արարկիրէն երկու հազարի չափ ստորագրութեամբ ելնք հանրագիր եկած և Պոլիս, որոյ մին սուլթանին գրիուած է ուղղակի, մին մեծ եպարքոսին՝ ճէվատ փաշային և մին ալ ազգային պատրիարքարան: Այս հանրագրով կը բողոքեն Արարկիրի մէջ եղած ձերբակալութեանց և խուզարկութեանց վրայ, ըսելով թէ ի դուր անդ անմեղ հայեր կը ձերբակալուին, կը շարչարուին և այլն և այլն, պատճառարանելով թէ հայեր կրնեն ամեն մարդասպանութիւնք, հրծիգութիւնք, տարատութիւնք, Մինչդեռ այս բանքն ընտղներ ոչ թէ հայեր են, այլ կառաւ վերական պաշտօնեայք, սասիկանք և այլք, որոյ նպատակն է այս մեթոտներով ժողովուրդը կեղեքել և հարստահարել ու գրամ չորթել: Աւտի, — կըսեն, — այն հանրագրով կը պահանջենք որ բողոքովն անկախ մարդիկն որ գան, քննութիւններ բանան և մեր բողոքներ մը տրի ընեն: Ահա ասիկ սոյն բողոքագիր ձեզ ուղղելով այս երկը հանրագիր նման վեց օրինակ վեց մեծ տէրութեանց հաղորդուած են: Այս հանրագրերու վրայ սուլթանը շատ բարկացած է և հրամայած է որ Արարկիրի ստաշնարդ Նզնիկ եղիսկապոսը Երուսաղէմ արտը գրկեն. սակայն սա վերջինը կը հարցապնդէ թէ ի՞նչ յանցանք տնիւն: Հանրագրերու առթիւ հայոցմէ բազմաթիւ ձերբակալութիւնք տեղի ունեցան:

Արտուի թէ Պոլսէն Արարկիր գինւորական յանձնախումբ մը պիտի երթայ քննիչի պաշտօնով: Սենք գիտեր թէ ի՞նչ պիտի քննէ, կը կարծուի թէ այդ յանձնախումբը տեղայն գինւորական գիւրք պիտի քննէ և թէ նոյն տեղայն վիճակի վրայ մամրաման տեղեկութիւնք պիտի բերէ սուլթանին: Կան կըսուի թէ ինչը ասօր սասիկաններ կը զրկուին Արարկիր, ուր թաղերուն մէջ պահակապետներ պիտի հաստատուին, որք ցարդ գոյութիւն չունէին: Կը պատմուի որ նոյն բազմութիւն մէջ մի ծաղրաշար՝ զեպր պատահած է: Արարկիր գաղտնարանի վրայ մի յայտարարութիւն կը փակցուի ընդգէմ կառավարութեան, զոր չը կարենալով վերցունել գրան այդ մասը սքզոցով կորելով կը գրկեն Քարբեղդ Կերեկ այդ յայտարարութեան պարունակութիւնը շատ խիստ գրուած է եղեր, որ այդչափ կարեւորութիւն տուած են:

Թուէս երկը օր յասաջ աստ բերին երկու անձ, ուք Գահիրէէն եգիպտական զօրքի հին զգեստներ կը փոխազրերն եղեր Արարկիր՝ ծախելու համար: Սակայն կատա վարութիւնը Սամանի նաւահանգիստը համանալն՝ կը գրուէ այդ իրեղէնները և Պոլիս կը տեղեկացնէ, որոյ վրայ թէ՛ զգեստները և թէ՛ մարդիկ Պոլիս բերուելով կը բանասարկուին: Այսպէս թուրք կառավարութիւնը ստուերներու կը հետեի այժմ:

Պոլսոյ Եէնի Գափու թաղին մէջ մի հրդեհ ծագելով՝ ջրհանկիր զօրոյ անհոգութեամբ հարիւր բոսն և հարիւր երեւանի չափ տուն այրուեցաւ, մինչդեռ կարելի էր տան և հինգ բոսն տուն փնասուելէ վերջ մարել հրդեհը: Բայց այս պարագայիս մէջ ալ առ հայն ունեցած վատուէր տեղութիւնն երկան բերին, փոյթ ետանգն չը ջանալով մարել կրակն, այլ անհոգ շարժմամբ այնչափ հայոց թշուառութեան սրտաճառ դարձան: Միթէ այդ թուրքերէն վար կը մնայ անխղճութեան կողմանէ: Աւրքեան պատրիարքը, որ հինգ վայրկեան միջոցով հետու գտնուելով՝ երբ իրեն կիմացունեն, որ Եէնի Գափուի բազմահայ թաղը հրոյ ճարակ կը լինի և՛ կըսեն թէ՛ սրբազան, կրակի վայրը գնանք խեղճերուն օգնենք, նա անտարբեր կերպով կը պատասխանէ՝ վաղը տուն է (այսինքն վարդանանց տանք), պէտք է պատկիմ որ ան հանգիստ չը լինիմ:

Նախընթաց շաբթուն Բաղաւեն մեզ կը հասնի հատատի աղբիւրէ քաղաքում հետեւեալ գոգութեան գեպքը, որ պատահած է Հաստ գիւղին մէջ:

Առաջինները գիւրայն կը կոչուպտեն թաւշճոնց աստ ամբոջը կոհ կարտիքն և ձմրան համար շտեմարանս: Ետեւաքը Սոյն առաջիններն են նոյն գիւղի մերձ գտնորոյ Քրսէջիք, որ բնակոյ առաջակապտեւերն են Գաւա և Աղիք:

Գիտատի .

Մաւշ, 21 գեկտեմբեր I 91 .

Սգեբոյցեան Մկրտիչ ազան (փոխտաճի), Արագլի գեղի բէխ Ղազարն, Սհան և Գէսրգն, Եմլակ գիւղի բէխ Սհանին և բազեջի շարքի Միսակի մասնաւորութեամբ երկու տարիէ հետէ կը հեծեն բանտի մութ անկիւնները՝ ստանց գլխի նախնական հարցաքննութեան մը: Մասնիչ բէխ Սհան գործով քաղաքը գնացած և վերադարձած միջոցին՝ իր մահապայտիչ հարուածն ընդունելով՝ ասոն համակէ հասկ ուրեմն վշեց իր վերջին շուն չը: Յիշատակն մասնաւոր անխիւրք եղիցի:

Հարկահանք բոստ ատաջնոյն բնիկ թիւրքերէն չեն, զի թեթեւ բաններ կը համարուէին տանոց հասցուցած անհամար աղետք և խոզմութիւնք, ո սով չէին կրնար գոհացնել իրենց բննապետ տէրը, այժմ լազերէ և չէրքէտներէ գրուած են այդ կարգի պաշտօնեայք, որոնք քաջ գիտնալով թէ յասակալն անգթութիւնք գործելու հրաւիր

ած են յայդմ ծառայութիւն, յաճախ զիւզերէն շինել շէր, կը կափեն, կը հարուածեն և կը բռնաբարեն հայ կանանց արտաւր: Աը շրջեցեն իրենց հետ մտախճառ մ' ևս. ո՞ր մարդ որ չը կարողանայ նախորդ և յաջորդ տարիներու արոց հաշիւը փակել, անոր արտը կամ կողը՝ ինչոր մնացած է իր անշարժ գոյքերէն՝ վաճառել կուտան և կ'անուն, եթէ հինգ - տասը գոհեկան աւելնայ հայուն ափին մէջ զայն ևս կը յափշտակեն իրենց ճամբու ծախքը հաշուելով Այլ այնուհետև ուրիշ միջոց չը մնար հայուն ապրելուն, երբ կը տեսնէ թէ իր ափ հողն ևս իր ձեռքէն գնացած է, որով կրնար բնտանեկան աճեցողութեամբ բարգաւաճելը յառաջ երթալ. յուսահատ՝ կ'անուն իր անբազգ, նօթի ու աղաղ զուակունք և կը կորչի յօտար աշխարհ:

Այս բիւտ հարկահանք շափելով, ձեւելով կը հասնին մինչև Պ. ու մ. ու, ուր կը հրամայեն որ իրենց ուզած խորտ տիկներ, առանձին, առանձին սենեակներ ըստ իրենց հաճոյից պատրաստուին և թէ բոլոր տուրքեր մէկ ժամու մէջ հատարուին և իրենց յանձնուին, եթէ ո՛չ, մենք գիտենք՝ կըսեն զիւզին բէխին: Սա առաջին առաջարկութիւնները կը մերժէ, իսկ տուրքերու մասին կ'էք նոյն տեսն և միւս կէտը աւաճանակէ մը վերջ մճարելու պայման մը կորուցէ, որոյ վրայ կը կատարին շէրքէս հարկահանք և բէխը սան սխենն ամրապնդ պրկելով՝ կըստին ձեռն ու թըքելը Այսու ամենայնիւ երբ անկարելի կը լինի բէխի տըւած սրտման ձեռն վրայ նոյն փոխոխում տալ, կը բռնեն զիւզին իննը կին, երեսները մար կը բռն և կը բերեն քաղաքը ինստատիսն հայոց. սակայն քաղաքիս գեր. առաջնորդ՝ Ա. եր. ու. ս. վարդապետ Խարախանեան, տեսնելով հայ կանանց պատուոյն այն սատիճան ստորնութիւնը, անմիջապէս առջու գեկուցում մը կընէ փառային ըսելով թէ «եթէ շէք ուզեր որ հիմա երկու գրացի աղգաց մէջ տրեսն հեղեղներ հոսին, կը յանձնէք հայոց առաջնորդարանին» փառան նախատեսելով զէպքէն դալիք հետեանքը երկու ժամէ վերջ կրնէրը առաջ նորդարանին կը յանձնէ:

Թիւ (Թիւ աւան), շէխներն վառեցին հայու մը հարիւր բարդ օրան, ուրիշ հայու մ' ևս մարագը լի խառով, Եմլակ զիւզացիներն՝ իրենց այգեաց աստանորդատրոց հոտանգատուած և հնգապատուած լինելուն պատճառաւ՝ բոլոր խաղողին տունկերն արմատախիլ ընել ստիպուեցան:

Խառագիւղ. — Այս զիւզին մէջ երկու տարիէ ի վեր հաստատուած էր յանձնախումբ մը ընդ հսկողութեամբ: Թառ և ս. վարժապետի, որ զիւզին նորակառոց ս. երրորդութեան եկեղեցւոյն վերաշինութեան պէտքերը կը հայթայթէր: Վերայիշեալ մեռած Սէանին մասնութեամբ ձերբակալուեցան անոնցմէ մի քանիներ, իսկ Թառ և ս. վարժապետն զպրոցը երեսի վրայ ձգած փախու:

Վարդ և նիս և ն երիտասարդ մը գառնէն սայրով խոտ բերած միջոցին՝ վնց բիւրդ գէմը կըլին սոյաննելու և անոր եղները տանելու շարժառութեամբ, բայց անվախ երիտասարդն իր արդար իրաւունքը անոնց չը կերպունէ:

յու գիտաւորութեամբ՝ հրացանով շարաշար կը վերաորէ անոնցմէ երկուքը և միւսներ կը փախչին զէպի զօրաց վրաններ օգնութիւն կանչելու: Զօրքերը երկու ժամ ու քսոսորդ հետաորութեամբ զիւզը պաշարած կը կհնան և տեսնալով երիտասարդին ի գործ գրած քաղութիւնը, նախանձով կը ձերբակալեն և կը գրկեն քաղաքը, ուր անմիջապէս բանտը կը գրուի: Տիրին կատար:

ՆԱՄԱԿ ՅՈՒՆՈՍՏԱՆԵՅ

Քաղաւմար, 14 յունար 1892.

Անցած օր ես գայինք Փիրայու մեր տաճիկին քօնու լաթօն և քօնուլ Էֆէնտին ըստ, թէ Պօլսն հրաման էկեր և իրենց, որ յոմի հողին մէջ եղած ֆուխարա — աղքատ - խիւանդ և անճար մնացած խայերին անխորտ փաշարիթ տան, ճամբու խառչուց տան և խառօրեն հրկիր Մէկէն մէկ սիրտս դարձաւ. ըսի՝ աս ի՛նչ աղեկ կ'առավարութեն աս մեր տաճիկին կ'առավարութենը. աս ի՛նչ օգործած ու բարի մարդ է մեր սուլթանը, որ մըզի խամար էզպէս հայախօք պէս կը մտածէ ու զմեր դարդ կը խօքայ: Մէկալ թարաֆէն ալ ըսի՝ աօ. աս ի՛նչ թափուր անապ ու խաց քոզի շուն ենք մենք, որ ա՛նչափ ազեկութեան տեսնուլէն ետքը հարավ խիւանդ ու ծուռ աչքով կրչկամր մեր սուլթանին: Կապէս Ֆիրբերու Լահէն ի, երբ մէկէն ու մէկ միտքս կ'աւ, որ քանի մը օր առեջ մըր մամլարեթէն մի թօպուն մոնչեր կ'կան ու էր կրին զբարմենը թարիֆ կենէյին: Կնոնք կըսէին, թէ հիմիկ քիւրդերը աղեկ են մըզի խառ, ամեն կատա վարութենը օր օրի վրայ վերկինըր՝ կ'աւելցունէ, թառ գէ՛ չը տեսնուած վերկիններ կը խանէ գուռ ու զըմէկէն երկիրը բերպէն ալ գեշ կը թառն և կը խեղախ: Զըմեն գեղերի մէջն ալ գարութենը լեցրել ա. առանք ալ գեղերի մէջ սուլթանի պէս խրատաններ կընեն ու իրենց խաժար կը թալլեն: Ալ որ ալ իշխանայ աղոնց գէմ կենայ, կը բռնեն, կը կապեն ու զայժաղամին կը տանեն, ըսելով որ «աս մարդը հաքս մեթին խայանութներէն ա»՝ Լէդ զարմենը անպագար շառցած են, որ Այո գարիբութեն էրթցողներն ալ շառցեր են. ամա փախող փախողի էկեր ա մըր մամլարեթէն կըր աս բաները միտքս բերի ու քօնուլ Էֆէնտինն ըսածներ խեռ քովէ քով բերի, շխարեցայ ու ջուր կորեցայ: Կս ի՛նչ թուրու բաներ կեղին աշխրբիս վրայ, զսղաթաջի ախարտինը. մէկ թառաֆէն զըմեն թուրու զարմենը կը խառցունեն զմեր գլխուն ու անանկ կենեն, որ մենք կը թորկներ զմեր քուլթաթ, զմեր տուն ու տեղ և գարիբութեն կը փախինք. մէկալ թարաֆէն ալ մըզի կըսեն թէ խիւանդ ու անճար մնացածներուն անխորտ երկիր կը խառօրենք: Կս ի՛նչ խաղ ա, ի՛նչ ճամբաղութենա, ի՛նչ զագար որ Ֆիրբը բերցի, չը կըցեր էի խառինար: Վերջէն սանախերս ըսաւ, թէ՛ կ'զանկ բաներուն փօլիթ իրա կըսեն... Լէդ խօքը ես չը խառցանք, ամա կ'նպէս զուշուրմիջ կեղնիմ որ էդ ալ ճամբաղութենի մէկ ուրիշ շեխաը ըլ ըսաւ է... Անցի Միւր:

Գ Ե Ս Պ Ա Ն Ա Կ Ա Ն Գ Ի Մ Ո Ւ Մ Ն Ե Ր .

Աթենքի յունական լրագիրներում կարդում ենք հետևեալը . —

« Անցեալ օրը, ամսիս 6 ըն կէսօրից յետոյ պաշտօնական ազդարարի տեղեկացանք, որ տեղիս թիւրքաց զեսպանը այցելելով արտաքին գործերի մինիստրին, մէկ ու կէս ժամ տեսակցութիւն է ունեցել նրա հետ: Այդ տեսակցութեան նիւթը եղել է այն, որ զեսպանը վճառակամապէս պահանջել է յոյն կառավարութիւնից՝ արտաքսել Յունաստանից այդ երկրում ապաստանած յեղափոխական հայերին, որոնք զաւարտութիւններ են անում թիւրք կառավարութեան դէմ: Հայաստանում յեղափոխութիւն անելու նպատակով Արտաքին գործերի մինիստր (նախարար) Պ. Լ. Մեխատալուս այդ պահանջին վիճանձնութեամբ պատասխանել է, թէ Յունաստանի օրէնքները և քաղաքական հիմնարկութիւնները չեն թոյլատրում արտաքսել և նոյն իսկ պաշտպանում են այն օտարականներին, որոնք ապաստան են գտել մեր երկրում հիւրընկալութիւն և հովանաւորութիւն խնդրելով և որոնք յարգելով մեր օրէնքները, ապրում են խաղաղ կերպով և ոչ մի քրէական յանցանք չեն գործում: Թիւրքական զեսպանը յայտնում է, թէ այդ փախստականները ոչ միայն յեղափոխականներ են, այլ և մարդասպաններ ու սճրագործներ (. . .): Պ. մինիստրն աւելի պարզորոշ կերպով պատասխանելով այդ կէտին, յայտնում է, որ յունաց օրէնքներին ամենևին չէ հետաքրքրում, թէ Յունաստանում ապաստանողները ի՞նչ յանցանքներ են ունեցել իրանց երկրում, թէ կուզ լինեն դրանք քրէական և մանաւանդ քաղաքական յանցանքներ: Յիրաւի, Յունաստանը յանձնում է օտարահպատակ քրէական յանցանքներին այն տէրութիւններին միայն, որոնց հետ նա այդ մասին պայմանաւորված է, բայց Տաճկաստանի հետ այդպիսի պայման չը կայ: Ահաք է ասել և այն, որ եթէ Յունաստանում ապաստանած հայերը որ և է քրէական յանցանքների մէջ խառնուեն, մենք նրանց կը պատժենք մեր տեղական օրէնքներով և կարտաքսենք այն պարագայի մէջ միայն, երբ նրանք կուզենան ախատել մեր կառավարութեան ու մեր ժողովրդի շահերի հակառակ: Չը նայած պ. մինիստրի այդ միանգամայն պարզ և սրտ պատասխանին, թիւրքաց զեսպանը վերստին պնդում է իր յաւանստ պահանջը, որով ստիպում է պ. մինիստրին աւելի կարուկ կերպով պատասխանել: Թէ Յունաստանը լու է ճանաչում իր պատմական կոչումը, որ նա, լինելով արևելեան ազգերի մտաւոր կենտրոնը և յարգելով իր սահմանադրութիւնը, միշտ սիրով կը հիւրընկալէ և կը պաշտպանէ այն ապաստանեալներին, որոնք կուզում են իրանց հայրենիքի ազատութեան համար: »

Կուսակցութեանս Վանձարանում շորհակալութեամբ ստացվել են հետևեալ գումարները . —

Ռուսաստ. Բ. քաղաքից Հայկազն Չինակրի միջոցով Փարոսից 8 րուբլ, Կայմակից 50 րբ., Նար. Արձախից 46 րբ., Արամից 3 րբ., Կայմակից (խմբից) 13 րբ.: Նիզակի ու Հրացանի հանգանակածներն 4 րբ.: Ն. Ն. քաղաքից Ա. . ի ձեռքով 3. Ա. . ից 5 րբ., Վ. ք. ից 10. ի միջոցով Ս. Ա. . ից 3 րբ., Մ. խ. ից 1 րբ., Մ. Մ. ից 1 րբ., Մ. ք. ից 1 րբ., Յ. Ղ. ից 1 րբ., Խ. Մ. ից յիսուն կօպէկ, Մ. ից յիսուն կօպ., Գ. Պ. ից յիսուն կօպ. ա. Մ. Լ. ից քառասուն կօպ. (ընդամեն

նը 8 րուբլի, քառասուն կօպէկ) . — Ֆրանսիայի Մարսէլ, ք. ից X. ի միջոցով 10 Ֆրանկ (որոնցից Մհարտից 1 Ֆր., Գասպարից 1 Ֆր., Յարութիւնից երկու Ֆր.), Յ. ձ. ից 10 Ֆր. . — Շվ. Ժ. ք. ից Մ. ից 5 Ֆր., Գ. ից 50 Ֆր. — Սիւրիկայի Ռուսերը ք. ից Գ. Բ. ից երկու զօլլար, Ա. Ռ. ից երկու զօլլար, Լիմ. Մաս ք. ից Ա. Գ. ից երկու զօլլար. — Ռուսական Վարազալ ք. ից Արք. ից քսան Ֆր. — Բօլգարիայի Վառնա ք. ից 10. Թ. ից 5 Ֆր. . — Եգիպտոսի Ա. ք ից Ա. Կանից 125 Ֆր., Օ. Ռ. ի ձեռքով Պ. Փ. Ն. Կանի ընտանիքից (Յ. Ն. ի միջոցով) քսանը հինգ Ֆր., Յ. Օ. Ն. ի միջոցով ճանապարհորդ մի հայ տիկինից քսան Ֆր., բարսցի Գ. աղայից քսան Ֆր., Արեգիի ձեռքով երկու հարիւր յիսուն և երկու Ֆրանկ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների, . — Յունաստանի կորնթոսի բանտրներից երկու հարիւր երեսուն դրախ մի (հարիւր յիսուն գ. արևելեան և ութսուն գ. արևմտեան կոպիկից) :

Լ յ յ ա տ ե ս ա լ

ձախում է միմայն « Հնչակի » խմբագրութեան մէջ
Նօ 4. հրատարակութիւն Հնչակեան Յ. կուսակցութեան

Ո Վ Ի Ն Չ Ո Վ Է Ա Պ Ր Ո Ւ Մ

Հեղինակութիւն
Սիմօն Գիկէլաէյնի.
Թարգմանութիւն .

Կրին է 75 ամախիմ (Ռուսաստանի համար 25 կօպէկ)

Պատրաստում է տպագրութեան համար

Կ Ի Ն Ը
տնցեալում
ն երկայում և ապագայում .
Հեղինակութիւն
Ա. Գ ու ս ա Բ եր ե լ ի .

Կարեւոր վրիպակներու « Հնչակի » սոյն համարի էջ 1, սխեմակ ա, սող 11 վերինից՝ գրւած է թիկնածու, պէտք է լինի՝ թ ե կ ն ա մ ու : Նոյնպէս էջ 1, սխեմակ ա, սող քսան և չորս ներքինից՝ գրւած է կրթական, պէտք է լինի՝ կրթ ու թ ե ա ն :

Խնդրում ենք ուղարկութիւն գործել « Հնչակի » հասցէի փոփոխութեան վրայ :

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետևեալ հասցէով .

Athènes (Grèce) . — M. Beniard . Poste restante .
Իսկ գրամական մանդատները — mandat — ուղարկել այս հասցէով . —
Eaux . Vives . (Suisse) . — M. Daniel . Poste restante .

Լօնդօն . Հայկական աղաւ տպարան .